

ՀամարԸ

3991

ՄԱԿԱՐԾԻ ԿԵՐՆԵՐԻ

891.998

Ե-34

ՀամարԸ

1894

891.99.033

շ-34

46

Գո
Տ-12

զԱՐԵ

ՄԵՌԱԾԻ ԿԵԱՆՔԻՑ

10089003 3049
35258

2

2004



ՇՈՒՇԻ

Տպարան Մահմետ-Յանիլիստիկ

1894

690496

844.5.0.0.4.0.0.0.0

Дозволено цензурою. Тифлисъ, 25 июня 1894 года.

Մէստածի Հէմանչից.



X քաղաքի արևմտեան կողմում, քանի
տասնեակ տարիներ սորանից առաջ, մի այլի
կող թոնրատան ընակվում էր X գիւղից ե-
կած մի աղքատ ընտանիք։ Ընտանիքի տարիքն
առած հայրը մի համեստ, բարեմիտ և երկիւ-
ղած մարդ էր։ Նրա անունը Թազան էր. նա
զրկուուծ էր մի աչքից, պարտպվում էր ջրկե-
րութեամբ և երբեմն էլ ամառ ժամանակ մօ-
տակայ գիւղերում ներկարառութեամբ և չար-
չիութեամբ։ Քաղաքի կեանքի հետ անձանօթ-
լինելու պատճառով նա մեծ գժուարութեամբ
էր կարողանում իւր ընտանիքը պահպանել և
իրեն երեսի դառն քրտինքով հազիւ հայթալ-
թել օրական պարէնը։ Մի քանի տարի այսպէս

ապրելուց լետով, ծերունի հալրը ստիպուած իւր երեք որդոցն ուղարկեց հեռու քաղաք ծառայելու մտքով. նա իւր հաշուով կարող էր մնացեալ որդոցը մի կերպ կերակրել:

Անցան մի քանի տարիներ, սակայն ծերունու վիճակը հետզետէ վատանում էր. նա թէե սովոր աշխատութեան, սակայն չէր կարողանում ընտանիքի ցամաք հացը վաստակել. մի կողմից՝ որ նրա ֆիզիքական ուժերը սկսել էին թուլանալ և միւս կողմից, որ նրան ոչ ոք օգնող չկար և ալդպէս նա մնացել էր լուսահատ գրութեան մէջ:

Մի անգամ հալրը տուն վերադաշտ, ըստ սովորութեան բարձեց իշեց ջրի տակառները և մտաւ ներս, ուր տխուր նստած էր նրա բարեսիրտ խեղճ կինն իւր որդիկերանց հետ: —Բարի երեկոյ, ասաց ծերն ու նստեց ծալապատիկ իւր կնոջ մօտ թոնրի վերեռում:

—Ի՞նչ բարի երեկոյ, այ մարդ, պատասխանեց թշուառ կինը. երեք որդիներդ թողել ես մօտ առանց հացի իսկ դու եկել գտամրի: Զես իմանում որ բերած հացդ միայն կէսօրին կերին. նրանք հաց են ուղում, քաղցած են, ես որաեղից պիտի ճարեմ: Այս տեղ էլ մեր

դիւզը չէ որ դնամ արքով (իրաւոնքով) հաւըաններից հաց փոխ ուզեմ բերեմ. ախըր ամաչում եմ շհար (քաղաք) տեղ է: Մեր տան տէրն էլ մեղ պէս մի ապքատ խեղճ կին է ողորմի հօրն որ թոնրատունն էլ ձրի է տուել:

Ծերունու առաջ մի տխուր տեսարան էր բացուած: Թոնրատունը լուսաւորուած էր ու նաւթի ճրագի աղօտ լուսով, որի ածխալին գաղը թանձր մառախուզդի պէս ծածկել էր թոնրատունը և որի առաստաղը կարծես ներկարարը նոր էր ներկել սև գունով: Ծերունու որդիքը պառկել էին միասին մի հնամաշ անկողնում և քաղցածութիւնից չեին կարողանում քնել: Երկուսը հօր երկիւղից միայն քսփում էին իրար ականջի. իսկ մէկը, որ ոչ ոքից չէր վախում, կատաղի կերպով հաց էր պոռում, հալհոյում ու լաց լինում:

—Ո՛հ, Աստուած, այսքան գաւակներն ինձ տալուց իետոյ, ինչո՞ւ և այնքան միջոց չես տալիս որ կարողանամ գոնէ սրանց ցամաք հացը հասցնել: Ես ի՞նչ եմ արել որ այսպէս անջում ես ինձ այս ծերութեանս ժամանակ, ի՞նչ յանցանք ունիմ, որի փոխարէն կրում եմ այս չարքաշ կեանքս: Ո՛հ, մեղալ

մեղմ, ի՞նչ եմ ասում, ո՞վ զիտէ, գուցէ իմ
բարի կարծած և կատարած բանս անիրաւու-
թիւն և մեղք է համարուած Աստուծոյ ար-
դարութեան առաջ և նրա համար պատժում
է ինձ: Թո՞ղ նրա սուրբ կամքը լինի. բայց այս
տնպիտանը, այս վայրենին, ձեռքը մեկնելով
գէպի իւր Սորդին, կատարեալ գազան է և
շատ է նեղացնում ինձ: Կարծես սա իմ որդին
չէ. այս կնիկ, որդիներիս ոչ մէկի նման չէ ոչ
տեսքով, ոչ խասեաթով, տեսնես ի՞նչ չար
ասողի տակ է ծնուել սա:

— Ա՞յ մարդ, ի՞նչ ես ալդքան նեղասրտել,
բա ես ի՞նչ անեմ, ամբողջ օրն ինձ խաչում է,
նեղացնում է. միւս երեխաներիս (փայն) բա-
ժինն էլ տալիս եմ ալդ սատանալին էլի չի
հանգստանում: Կովում է, հայհոյում է, մի
խոսքով պատիժ է էլի, Աստուծ տուել է
մեզ: Նէնց ծծկեր ժամանակից երևում էր, որ
գա լաւ պտուղ չի լինելու, որովհետեւ միւս
որդիներս, եթէ պատահում էր որ իրենց
ծծկեր ժամանակ մի ուրիշ երեխալի կաթ էի
տալիս, չէին լացում և ճանկուտում նրան-
քայց սրա օրօք ո՞ր մէկ երեխայ կամ հէնց իւր
եղբալներից կարող էր մօտենալ գէպի ինձ. մի

այնպիսի աղմուկ էր բարձրացնում որ մնում
էի մաթալ. երբեմն էլ շան պէս կծում էր
իրեն կաթ տուող ծիծը: Լուսահոգի մալրս,
Դրա աշխարհ գալուց, երբ նայեց դրա գէմքին,
ասաց, — այդ կատարեալ այն աւագակ, մար-
դասպան և մեր գիւղօրակը սարսափի մէջ
պահող Աբդուլլի գէմքն է: Իսկ և իսկ, այ-
մարդ, շատ նման է նրան. սարսափում եմ
շատ անգամ դրա տափակ երեսին նայելուց:
— Ա՞յ կնիկ, (արդար) և շատ նման է, կը-
նշանակէ լիդի ժամանակդ այդ անպիտանը նրա
երեսն է խաղացել: Ե՞հ, ի՞նչ արած, մեր մեղքն
է ալիտի եօլա տանենք. շատ անգամ էլ տղեղ
մարդիկ գեղեցիկ հոգի են ունենում, գեղե-
ցիկնելն էլ՝ տղեղ: Վերջը բարի լինի, այ կնիկ,
ասաց խեղճ ծերուկը և ոտքի վաթաթները
հանելով, մտաւ մի կիսամաշ կեղտոտ վերմակի
տակ և ընկաւ քնոյ գիրկը:

Առաւոտը լուսաբացին ամենից վաղ վեր
կենալով անկողնուց՝ ծերը էշն առաջը ձգեց և
գնաց ջրի: Ամբողջ օրը նա ընկած էր խոր
մտածմունքի մէջ և ինքն իրեն արագէս էր
տառւմ.

— Հազիւ օրեկան մեց բեռը ջուր եմ բերում,

ալդ էլ 30 կոպ. սորանով ի՞նչ անեմ, էշի ուտելիքն էլ գուրս գալով մնում է 20 կ. բայց 20 կոպ. հինգ հոգուն ի՞նչ անէ։ Ա՛խ Աստուած, ի՞նչպէս անեմ։

Ողորմելին այսպէս մտմտալով Հասաւ վերջն այն եզրակացութեան, որ իւր այն չար որդուն տայ մէկին ծառայելու։ Ծերունու ալդ որդին կարճահասակ, թուփ աչքերով, տափակ երես մի տղայ էր, նրա դէմքի գծագրութիւնը նման էր Մոփսի չորբոտանի կենդանիներին։

Երեկոյեան հայրը տուն գալուց կանչեց իւր Կ որդուն, նայեց նրան զննողական կերպով, շարժեց գլուխը և արտասուքն աչքերին ասաց.

—Որդի, մեծ եղբայրդ անդամալոյծ, ապուշ և բոլորովին մի անընդունակ էակ է, նրանից մեզ օգուտ չ'կալ. դու էլ տեսնում ես իմ վիճակը։ Ծերութիւնս բոլորովին յաղթել է ինձ, ալլ ևս չեմ կարողանում ձեզ կերպել այնպէս, ի՞նչպէս վայելն է։ Ես կարացածիս չափ զբանաչ արի քեզ և եղբօրցդ. ալլ ևս պարապ մնալդ օգուտ չէ թէ քեզ և թէ ինձ. մեծացել ես խելքդ էլ կտրում է քեզ պիտի զրկեմ Ն քաղաքը, որ այնտեղ ծառայես և

ապադայում քեզ համար ապրուստ ունենամ։ Բայց որովհետեւ ես քո հայրն եմ, ուզում եմ քեզ մի քանի հայրական խրատ տալ, որ գումինչև կեանքիդ վերջի ըոպէն մտքիդ պահես և իսկութեամբ կատարես։

—Որդի, 'ի հարկէ տեսած կլինես թէ պարտէզներում, թէ գաշտերում և թէ կանաչ մարգագետիններում ի՞նչպէս իմաստուն մեղուները իրենց փեթակից հեռացած գաշտի ամեն տեսակ ծաղիկների վրայ են իշնում և նրանցից միայն հարկաւոր նիւթը վերցնելով, իրենց բժիճը վերագառնում, քաղցը մեղը յօրինում և նրանով լցնում։

Այսպէս պէտք է և գու հեռանսս օտարափար քաղաքներ և նրանց անուշահոտ ծաղիկների թունաւոր մասերը թողելով, քաղցը ու օգտակար հիւթը վերցնել, գալ հայրենիքիդ բճիճը յօրինել և լցնել քաղցը կենսատու հիւթով։ «Լեզուի հարուածը դաշունի հարուածէն աւելի վտանգաւոր է»։ աշխատիր, որդի, հաւատարմութեամբ ծառայել քո տէրերին և նրանց խօսքերի պատասխանը յանդգնաբար չ'դարձնել։ Սիրիր և յարգիր անկեղծօրէն բարեկամներիդ, բարեբարներիդ և

ընկերներիդ ինչպէս քո անձը: Բաղդաւորութեանդ ժամանակ չամբարտաւանաս, չմեծամտիս և քեզ հաւասարակից մինչև անդամ և քեղանից շատ ստորներին ոչնչի տեղ չգնես. այլ ընդ հակառակը մարդասիրաբար վարուիր դորանց հետ: Մեծարիք, յարգիք բոլոր առաքինի մարդկանց, լինին նրանք հարուստ կամ աղքատ, մեծ թէ փոքր: Խոյս տուր և փախիր մոլութիւններից և նրանց երկրագուռ անձնաւորութիւններից: Ուրիշի ունեցածի վրայ աչք չ'ձես, օտարինը օտարինը համարիր, քոն էլ քոնը: Լաւ իմացիր որ անհաւատարմութեամբ ժողոված գանձդ, եթէ ծով էլ լինի, պիտի ցամաքի և վերջում կըմնաս ամօթալի ու ուերես թէ մարդկանց, թէ Աստուծոյ առաջ և լիշատակըդ միշտ անձքով կիթշուի:

Քո և բարեցարներիդ օգտի համար հակառակ խղճի և արգարութեան չգործես. քո անձնական հաշիւների համար երբէք սուտ, նենդաւորութիւն և դաւաճանութիւն չըանացընես, որովհետև մի յանցանքը մի ուրիշն է ծնում: Աշխարհի հարստութեան համար ձեռքերդ և հոգիդ արիւնոտ չանես, այնուհետև Աստուծած միշտ քեզ հետ կլինի և խիղճդ քեզ

չէ տանջիլ. խղճի տանջանքն ամենից խիստն է և անտանելին:

Անաջողութեան մէջ ընկնելուց երբէք չփհատուիս, ասելով թէ՝ հօրս տուած խրատներն ինձ օգուտ չբերին: Ես իբրև գիւղական մի ռամիկ մարդ երբ ցորնի հատիկները ցանում էի հերկած դաշտում, լոյս Աստուծոյ վրայ դրած, երբէք չէի վհատում և հնձի ժամանակ ստանում էի առատ վարձատրութիւն իմ կրած նեղութիւններիս փոխարէն: Այժմ էլ քո սրտի մէջ այսչափ բարի խօսքեր ցանելով, մեծալոյս եմ որ վարձատրութիւն կստանամ եթէ կենդանի լինիմ, իսկ եթէ մեռած, դու ինձ համար բարի լիշատակ կլինես, որով և իմ անունը չէ մոռացուիլ: Ահա որդի, սրանք են իմ խրատները, որ տուի քեզ և դու պարտական ես ամենայն ճշտութեամբ կատարել իբրև քրիստոնեալ:

Անցել էին գիշերուայ ժամերը, թոնրատան մէջ քնած չէին հալը, որդի և մալը, որն անկողնի մէջ նստած որդու համար մի երկու փոխնորդ էր կարում: Պարզ լուսինը կապուտ երկնակամարի վրայ իւր անթիւ աստղերով, կարծես իւրեւ լուռ վկայ, կանգնել էր թոնրա-

տան նեղ լուսամուտի առաջ և ժպիտը երեսին
լսում էր հօր որդուն տուած բարի խրատները։
Ծերունի հալրը մտաւ անկողին, բայց քունը
չէր տանում. նրա սրտի խորքերում նստել
էին զանազան մուալլ մտքեր ինչպէս աշխան
թանձր մառախուղը նստում է օրերով լեռնոտ
ու բարձր տեղերը։ Երկար ժամանակ ծերու-
նու սրտից հառաջանքները չէին կտրվում,
վերջապէս վրայ հասաւ երախտաւոր քունը և
փակեց ծերունու աչքերը։

Ծերունու Կ որդին էլ էր մտել անկողին
և մտածում էր թէ իւր ճանապարհորդութեան
և թէ հօր տուած խրատների համար։ Նա էլ
փակեց աչքերը և ինչ էք կարծում հանդիսա-
քնեց. —ոչ, նա երագում տեսաւ իրեն մի ա-
կագին բարձրութեան վրայ և մի հրէշ իւր
առաջը կանգնած, որի աչքերից հուր էր
թափվում և բերանից թանձր ծուխ։ Նա իւր
ձեռքի գաւազանը գետնին խփելով, բացեց
բերանը և սկսեց այսպէս։

—Ո՞վ պատանի, հալրդ շատ որդիներ ունի,
իսկ դու իմն ես, նա քեզ օտարութիւն է
զրկում ցանելով սրտիդ մէջ հակառակ իմ
ցանկութեան և քեզ անօգուտ խօսքեր։

Աշխարհի ստեղծագործութիւնից մինչև այժմեւ
միշտ ամբողջ տիեզերքի մէջ ամենափորձառու-
էակը լինելով, հաւատացնում եմ որ հօրդ և
նրա նմանների լիմարական խրատները քեզ
օգուտ չեն կարող բերել։ Գնա հակառակ հօրդ
ասածներին, արա ինչ ուզում ես, միայն քո
անձնական շահերը և վայելչութիւնները ձեռ-
քից չտաս։

Հաւատարմութիւնը մի լոկ անօգուտ
խօսք է. ամեն մի քալլափոխում աշխատի՛ք
անազնիւ ու ստոր միջոցներով (որոնք միայն
լիմարների համար են ատելի) յափշտակել
մարդկանց։ Ոսկիդ, արծաթդ շատացնելու հա-
մար, թոնդ ձեռքերդ էլ ներկուին արիւնով,
ապազան այդ քեզ կսովորեցնէ։ Եթէ կըկա-
տարես իմ ասածները, կլսես իմ խօսքերը,
միշտ քեզ հետ կլինեմ և միշտ կօդնեմ քեզ
ու այդ պատառուտուն հագուստի և տրեխների
տեղ, ոսկով ու դիպակով կզարդարեմ քեզ։
Միայն չ'մոռանաս քո զանազան միջոցներով
ձեռք բերած հարստութիւնից երբեմն-երբեմն
մի անշան մասը հանել աղքատների և բա-
րենպատակ գործերի։ Ես երբէք բարենպատակ
չէի ասիլ, եթէ չիմանակի որ գրանով խաբում

Ենք մարդկանց և բոլորովին կուրացնում նրանց
մեր գործերը չտեսնելու համար։ Զմոռանաս
նոյնպէս շողոքորթել, կեղծել, քծնել և ալլ...

Պատանին նրա այդ խօսքերից սիրտ ա-
ռած ասաց.

—Ով մեծ, որիդ չգիտեմ ի՞նչ անուն տամ, ով
ես դու և ի՞նչպէս հաւատամ քո ասածներին։

—Նրէշը շարժեց գաւազանը և ահա նրա
շուրջն երևացին զարդարուն և շքեղ շատ
նշանաւոր մարդիկ, որոնք ծառայի և ստրուկի
պէս ծունկ չոքած սպասում էին նրա պա-
տուէրներին։

—Այս մարդկանցից ո՞րին ես ճանաչում,
հարցըեց հրէշը։

—Ահա սրան և այն միւսին, ահա և նրան
ու չորորդին, դրանք մեր քաղաքի և դիւզի
հարուստ իշխաններիցն են, պատասխանեց
պատանին։

—Բայց դրանք իմ ծառաները և իմ խոր-
հուրդներին հետևողներն են, ասաց հրէշն
աւելացնելով։ —Նախիր այժմ դեպի ցած և տես
ովքեր են այնտեղ։

Պատանին նայեց և տեսաւ այն ահագին
բարձրութեան ներքեում ազատ իրենց համար

և ճակատի քրտինքով ապրող հասարակ մար-
դիկ, տեսաւ և իւր հօրը ցեխոտ, ոտքերը
կիսաբաց, մէջքից կեռացած, ճիպոտը ձեռքին
է շի ետևից։

—Հապա լաւ մտածիր, տղամ, սրանցից որին
կուզես նմանութիւն։

—Ի հարկէ հարուստներին, պատասխանեց
պատանին։

—Ուրեմն կատարիր պատուէրներս, ասաց
հրէշը, համբուրեց պատանուն և ցանկանում
էր գնալ։

Գոչեց պատանին։ —Բայց քո անմանն, ով
բարերար։


—Իմ անունը, ես մի անուն չունեմ, որ
նրանով բաւականացնեմ քեզ, կասեմ միայն
հարիւրից մէկը։ Ատելութիւն, ոխակալու-
թիւն, գողութիւն, սպանութիւն, նենգու-
թիւն, ստութիւն, ագահութիւն, չարութիւն,
գալյթակղութիւն, քսութիւն, շողուքութու-
թիւն, խոռվութիւն, հակառակութիւն, ինք-
նահաւանութիւն, գոռոզութիւն, մատնու-
թիւն, կաւատութիւն և շահամոլութիւն մի-
այն կեղծ աղջասիրութեան և առաքինութեան
դիմակների տակ։ Լսեցիր, աշխատիր միշտ

վերջինների տակ թագնուած գործել:

Այս խօսքերն առելուց յետոյ, հրէշը իսկոյն սլացաւ օդի մէջ իւր ետևից մի սև զիծ թռղելով:

Պատանին ուրախութիւնից զարթնեց և առանց այլ ևս երկար ու բարակ մտածելու, վճռեց տեսիլքի մէջ լսածների համաձայն դնալ:

Առաւօտեան զանգակների մեղմ զօղանչիւնները ծերունուն հրաւիրեցին եկեղեցի. նաև կատարեալ Քրիստոնէական հաւատով, յուսով, սիրով և երկիւղածութեամբ մտնելով տաճարն երեք անգամ ծունը դրաւ, մի զորդ մոմ վառեց և իւր որդոց բարեբաղզութեան համար ջերմեռանդ ազօժելով, դուրս եկաւ ու գնաց իւր գործին:



Ե-ի օդուրութեանը և նրա գործերը.



Միւս օրը ծերունին իւր որդի Վ-ին ճանապարհեց Ն քաղաք: Վ-ը ճանապարհորդութեան ժամանակ ամբողջ օրերով մտածում էր իւր տեսած երազի համար: Նա մի քանի շշաբաթ Ն քաղաքում պարագ մնալուց յետոյ, աղաչում է իւր հալբենակից վաճառականներին, որոնք էլ խղճալով նրան՝ օգնութեան ձեռք են մեկնում և ընդունելով իրենց խանութի մէջ՝ մի քանի ամիս պահում սովորեցնում են վաճառականութիւն, յետոյ էլ մասնաւոր ապրանք են տալիս թէ՝ վաճառիր օգուտը քեզ՝ մաեան մեզ: Հետզհետէ հրէշի սերմերը սկսում են աճել Վ-ի թունաւոր սրտում. նա սկսում է և իւր բարեբարների դէմ գործել, որոնք նրա խարդախութիւնները տեսնելով նախատում են նրան և կարճում իրենց օգնութիւնը:

Զորս տարի էր անցել Վ-ի առևտուր սկսելու օրից: Դարնան գեղեցիկ գիշերներից մէկն էր. ջերմ քամին ծառերի նորաբաց տերևներին մեղմաբար իւր համբոյը տալուց յետոյ, հանդարտ ու հեզիկ սահելով անցնում էր կանաչազարդ երկրի վրայօք: Աստղազարդ երկինքն իւր թագուհով և ըոլոր փառաւորութեամբ, որ ամեն բարեպաշտ ու ազնիւ սրտեր իրեն քաշել գիտէր, մեր ընթերցողին յայտնի օձաբնոլիթ Վ-ի համար կարծես մի աւազոտ անապատ էր: Նա այդ մասին ոչինչ չէր զգում, այլ ուր որ աչքը կդարձնէր, միայն իւր մտքին ու սրտին պաշտելի հրէշը կտեսնէր և նրա այս ազգու ձայնը կլսէր. «Աշխատիր անազնիւ և ստոր միջոցներով յափըշտակել մարդկանց. ոսկիդ, արծաթդ շատանալու համար թող ձեռքերդ էլ ներկուին արիւնով»:

Հէնց այս մտախոհութեան մէջ էր, երբ իւր ծանօթներից մէկը հանդարտ ձեռքն ու սին դնելով սասց. «Ի՞նչ է էլի խորասուզուել էք մտքի մէջ. առ, առանց մի կոպէկի եկել էք, այժմ փառք Աստուծոյ, ասլրուստ ունիք, փոքր ՚ի շատէ անուն ունիք, ի՞նչ է էլի փողի համար կլինէք մտածում. վեր կացէք, վեր,

ամեն բան համբերութեամբ և աշխատասիրութեամբ կարող էք ձեռք բերել, միայն կանոնաւոր խնայողութիւնն էլ չպէտք է մոռանալ»: Այս ասողը մի բարեմիտ խելացի երիտասարդ էր, որ Վ-ից առաջ էր գնացել Ն քաղաքը և գործակատարի պաշտօն էր կատարում:

— Այդ դուք էք Ա., խնդրեմ նստեցէք, ասաց Վ-ը:

— Ի՞նչ կայ նստելու, եղբա՛լը, բոլորն էլ գրունում, խօսում են, ի՞նչ է վեր էք ընկել:

— Ես էլ ինձանից զարմացել եմ, բարեկամ, շատ սիրում եմ միայնութիւնը, պատասխանեց Վ-ը:

— Որ ալդպէս է վանք գնացէք, տեսնես էլի ի՞նչ է մտքներդ ընկել, մի գուցէ... /

— Ո՛չ, հաւատացէք, որ ալդպիսի թեթե բաների համար էլ չեմ մտածում շատ լաւ իմանալով, որ եթէ ցանկացածս ձեռք բերեմ, այդպիսիները միշտ կան հօ կան:

Նրանք մի երկու ժամ զբոսնելուց յետոյ և միմեանց բարի գիշեր մաղթելով հեռացին դէպի իրենց աները:

Շատ յալտնի վաճառականների թւում և Ա-ի տիրոջ գործերը շնորհիւ մի յայտնի նիւթի ընկնելու պատճառով յետ էին գնում. այդ

տեսնում և իմանում էին բոլոր քաղաքացիք։
Նա ամուրի, տարիքն անցկացրած, հարստա
մտադր էր և շատ էլ չէր մտածում դրա հա-
մար, այլ կարծելով որ էլի կարող է նոյն նիւ-
թըն իւր առաջին արժեքն ունենալ, մշակ և
այդ բերքի վարուցանքով կատավարուող մարդ-
կանց բաց էր թողնում իւր հազարները։

Y-ը շատ անգամ ախ էր քաշում՝ ասելով։
«Երանի թէ ես լինէի Ա.-ի տեղ. հարստանալու
լաւ միջոց ունի, բայց շատ լիմարն է, ինչ
արած։ Ինչ որ էլ լինի, ես պիտի նրա խելքին
փշեմ, որ նա հանգամանքը ձեռքից չտայ. այդ
թէ իմ և թէ նրա օգուտն է»։ Մի օր առա-
ւոտեան անձամբ Տ-ը գնալով Ա.-ի մօտ խընդ-
րեց երեկոյեան գալ իւր մօտ։

Խանութի յետեսի փոքրիկ սենեակում
ինքնաեռն եփում էր։ Մի քառակուսի սեղանի
առաջ սրտերով ու մտքերով տարբեր մեր երկու
երիտասարդները խորոված ացու էին կոտորում,
ածուխն էլ օջախում չըթչըթալով կայծեր էր
ցրում. փոքրիկ լամպան լուսաւորել էր սենեակը։
Y-ը լնդհատեց Ա.-ի գոլարիկ երգը և ասաց.
«Հիմայ գուրք թէլ ածեցէք, ես էլ շամփուր-
ները քաշեմ»։ Թէյը վերջացաւ, ինքնաեռը

լոեց, նրա տեղ ալժմ խորովածի տժժոցն էր
ձայն բարձրացրել. մեզ ծանօթ ընկերները
նստել էին օջաղի առաջ՝ համ ուտում էին,
համ շամփուրները շուռ տալիս։ Y-ը վերջնելով
գինու բաժակն՝ ասաց. «Առաջին և երկրորդ
բաժակները մեր կենացներն էին, իսկ այս
երրորդը խմում եմ այն անձանց կենացները,
որոնք իրենց լաւ խորհուրդներով օգնում են
մարդկանց, և նրանց՝ որոնք լսում են այդ խոր-
հուրդները, ուրեմն հետեւապէս իմ և ձեր
կենացն էլ, բարեկամ»։

—Թո՛ղ ալդպէս էլ լինի, պատասխանեց Ա.,
բայց նախ քան խմելը կցանկալի իմանալ թէ
ինչ լաւ խորհուրդ պիտի տաք։

—Խմեցէք և կըլսէք, շարունակեց Տ-ը.
«Սիրելի բարեկամ, ես՝ որպէս զի իմ խղճի ա-
ռաջ պարտական չ'մնամ, ահա կատարում եմ
պարտքս զգուշացնելով ձեզ ապագայ վտանգից։
Շատ մարդ ալնպիսի մտածութեան և երկիւղի
մէջ է ընկնում, որ այդ գաղտնի երկիւղը
սիրտն անհանգիստ է դարձնում։ Իմ կարծիքով
այդ երկիւղը և մտածմունքը մի ուրիշ բան
չեն, եթէ ոչ մի ընազդում, որ մարդուս մեր-
ձաւոր դժբաղդութեան պատրաստել է ուղում,

որպէսզի դժբաղդութիւնը պատահած ժամանակ անպատճաստ չլինի: Գիտես, սիրելի, անակնկալ ցաւերը շատ անդամ աւելի խոր վէրք կալատճառեն մարդուս, քան այն ցաւերն ու վշտերը, որոնց ստանալու համար արդէն մտրդ պատրաստուած է: Ես գիտեմ որ դուք, ահա քանի տարի է, ծառայում էք Հին և նրանից բաւականին ստանալիք ունեք: Բայց չէ անցնիլ քանի ամիս ևս, այդ մարդը բոլորովին կզրկուի իւր ունեցածից իւր բոլոր հարստութիւնը թաղելով գետնի տակ, ինչպէս մարդ իւր ամենասիրելին գերեզմանի մէջ, որտեղից էլ նա չպիտի գուշոս գալ: Եւ որպէսզի դուք դադարէ - ձեռքով չվերադառնաք հալրենիք, ահա ձեզ իմ բարեկամական խորհուրդը. շատ լաւ կանէք՝ եթէ որքան նա ձեզ տալու է, կրկնապատիկը վերցնէք: Բոլոր գործը ձեր ձեռքին է, օրեկան հարիւրաւոր մարդկանց փող և արմտիք էք բաց թողում, արդեօք ի՞նչ մի մեղք արտծ կլինէք, եթէ ձեր կեանքն ապահոված լինէք, մանաւանդ որ պարզ տեսնում ենք, որ այդ մարդն իւր ունեցածը կարծես գիտակցաբար բաժանում է սրան-նրան: Պարզն ասած, եթէ ես լինէի ձեր աեղ, հիմալ ամենից

հարուստ մարդը կլինէի. շատ չանցնիլ այդ ծերունին կըսնանկանալ և ի՞նչ մէծ ցաւ նրա համար, քանի որ բացի իրանից ոչինչ չունի և ոչ մի բանի չէ սպասում, եթէ ոչ մահուան: Կրկնում եմ, բարեկամ, հաշիւներդ իմացէք, հանգամանքից օգուտ քաղելու ժամանակն է, չէ որ ձեզ ապագալ է հարկաւոր, չէ որ կեանքի մէջ պիտի մտնէք: Ահա իմ խորհուրդը, այսուհետեւ ես ազատ եմ, իմիդն էլ չի տանջիլ ինձ»:

— Ես գորա հսմար առ այժմ լուսմ եմ և ոչինչ վճռողական քայլ չեմ կարող անել, հարկաւոր է մտեծել. բայց ինչ վերաբերում է ինձ հասանելի արդար ոռոճկիս, այդ կվերցնեմ, բարեկամ և կյանձնեմ ձեզ, պատասխանեց Ա. և բարի գիշեր մաղթելով Ա-ին՝ հեռացաւ դէպի իւր կայարանը:

Գիշերը թէև քունը վաստակաբեկ կամ կեր ու խումով ծանրացած մարդոց համար մէծ երախտաւորն է, սակայն նա փախչում է այն ժամանակ, երբ նենգաւորութիւնը, ագահութիւնը մարդկանց սրտերը մտնելուց յետոյ շատակեր անգոների պէս պատռում են նրանց առանց հանգստութիւն տալու:

Ալսալէս էլ Վ-ի սրտի մէջ ալդ գարանակալ չարաթոյն օձերը չէին թողում նրան քնելով: Նա այսպէս էր մտածում. «Եթէ Ա. կատարեց իմ խորհուրդը, եթէ նրան ձգեցի իմ թակարդի մէջ, այնուհետեւ նրա ունեցածն էլ իմս է:

Մի քանի օրից յետոյ Ա. ժպիտը բերնին մօտեցաւ Վ-ին և մի համեստ զումար յանձնելով նրան և առաջին տուածի հետ միացնելով՝ մի պարտամուրհակ առաւ:

— Ինչո՞ւ միայն այսքան, ես ձեզ ուրիշ կերպ ասացի, հարցրեց Վ-ը:

— Իմ խիզճը թոյլ չէ տալիս, առհասարակ, անհաւատարմութիւն անել, մանաւանդ գէպի այնպիսի մի անձնաւորութիւն, որը հօր պէս սիրել է ինձ և ըստ արժանոյն վարձատրել, պատասխանեց Ա.

— Դուք դեռ մանուկ էք, գիտէք հասարակաց այն առածք՝ «ընկնիլ մեղըի կարասի մէջ և մատ չլիզել, լիմարութիւն է»: Յետոյ կփոշմանէք, բայց ուշ կլինի: Խելքներդ գլխներդ հաւաքեցէք, արէք այն, ինչ որ ասում եմ, թող մենք էլ խազէլինիդ համար դառնանք այն մարդկանցից մէկը, որոնց հազարներ է տալիս, կարծելով որ պիտի ստանայ, պատասխանեց Վ-ը

աւելացնելով և այս կեղծ մարդասիրական խօսքերը. «Հաւատացէք, բարեկամ, դուք աջող գէպիքը ձեռքից մի տաք. հարկաւոր գէպիքում կարող էք օգնել անդամ ձեր խազէլինին և գետէք ինչ անուն կվաստակէք հասարակութեան մէջ և նա ինքն էլ որքան գոհ կլինի որ իւր թշուառութեան ժամանակ իբր թէ ձեր սեպ-հականութիւնից երախտազիտական զգացմունքից ստիպուած իրեն մի բան էք շնորհում:

Ե-ը շարունակ իւր նենդաւոր խորհուրդներով տիրում էր Ա.-ին, որն իբրև գլխաւոր գործակատար շատ հեշտութեամբ կարող էք դիմել անհաւատարմութեան և այնպէս անել որ գործատէրը չիմանալի: Ա. այդպէս էլ արաւ և մի քանի ամսուալ ընթացքում մի համեստ գումար կորգեց: Այս գիտէր և Վ-ը, բայց որպէսզի կարողանայ ինքն էլ իւր մասը կամ եթէ ձեռօքը գայ բոլորն իւր գրպանը մտցնել դիմեց մի աւելի նենդաւոր գաւաճանութեան: Նա սկսեց կողմնակի եղանակով Ա.-ի գործատիրոջ կասկածը նրա գէմ յարուցանել: Բայց նա թէև Ա.-ի երկարամեայ հաւատարիմ ծառալութիւնն աչքի առաջ ունենալով չէր հաւատում, սակայն մի օր նկատողութիւն արաւ Ա.-ին և ասաց:

— Լսում եմ որ դու դէպի ինձ անհաւատարիմ ես գտնուած, ալդ պատիւ չէ բերիլ քեզ, եթէ իսկ է:

Ա.-ը առանց երկար մտածելու պատախանեց համեստութեամբ.

— Ալդ թշնամու խօսք է, հաշիւներիդ նայեցէք եթէ կասկածում էք:

Ա. երեկոյեան տիսուր տրամադրութեան մէջ ներկայացաւ Վ.-ին իբրև իւր անկեղծ բարեկամին և լայտնեց իւր տիրոջից լսածը:

— Ալդ ամենալաւ միջոցն է, դուք կարող էք հէնց դորա պատճառով իբր վիրաւորուած թողել գործերդ, ներկայացնել հաշիւներդ և հեռանալ, ով գիտէ, գուցէ վաղն էլ մի ուրիշ բան կասէ, պատասխանեց Վ.-ը: Գիտեմ նա ձեզ չէ կարող բաց թողել, քանի որ աչքի առաջ ձեզ նմանը չունէ, և երբ ձեր մնալուն համար կալնդէ, դուք նրան կառաջարկէք թէ՝ որովհետեւ ինձ վրայ կասկածել էք, ուստի ինձ մի թուղթ տուէք կանոնաւոր եղանակով թէ իմ երկարամեալ հաւատարիմ ծառալութեանս և թէ պահած հաշիւներիս օրինակելի ճշտութեան համար, այնուհետեւ միայն կարող եմ ձեզ մօտ մնալ: Այս թուղթը՝ ձեզ պաշտպանելու համար իբրև

մի լաւ գէնք, ստանալուց լետու կարող էք մի քանի ամսից յետով հեռանալ նրանից և մենք երկուսս ընկերական գործ կուսենք:

Այսպէս էլ կատարուեց. Ա.-ը թողել էք իւր պաշտօնը, բայց Վ.-ը նրան ալսօր վաղն էր ձգում ասելով թէ՝ եթէ մենք այսպէս շուտ գործ սկսենք զանազան կասկածների տեղիք կտանք, սալասեցէք մի քանի ամիս:

Որեգակն օրուայ իւր վերջին հրաժարական ողջոյնը ծառերի կատարներից ամենաբարձր լեռների գագաթներին տալուց լետոյ, երեկոյեան քողը փռուեց կանաչ մարգերի վրայ: Ա.-ը տիսուր և միայնակ նստած հասարակաց այգիի նստարաններից մէկի վրայ, չէր զմալլվում բնութեան այս փառաւոր և հրաշալի մշտնջենաւոր գեղեցիկ տեսութիւնով, որովհետև Վ.-ի դէպի ինքն ունեցած ցրտութիւնը և խարէութիւնը նրան ձգել էին մտատանջութեան ծովի մէջ, որից դուրս գալու ելք կըորոնէր: Նա վերկենալով տեղից ուղղեց քայլերը դէպի Վ.-ի կայարանը:

— Բարի երեկոյ, ասաց Ա.-ը:

— Աստուծոյ բարին, նստեցէք, պատասխանեց Վ.-ը:

Կարճ լոռութիւնից լետով Ա. շարունակեց.
—Եղբայր, ես մինչև Երբ պիտի պարապ
փչացնեմ կեանքս. ծեր ասածները լսելով՝ կա-
տարեցի այս, ինչ որ ցանկանում էիք, բայց
այսօր պարզ տեսնում եմ որ դուք միևնույն
մարդը չեք: Ահա քանի ամիս է անցել այն
օրից երբ ես ձեր ցանկութեան համաձայն
ընկերութիւն շարունակելու համար թողեցի
իմ ծառայութիւնս, բայց թէ ինչու այսքան
գործը կձգ-ձգեք, ես չեմ իմանում: Ես եկել
եմ այժմ վճռողական մի բան լսելու. պարզն
ասած, եղբայր, կամ ընկերութիւն, կամ մեր
հաշիւները վերջացնենք առանց միմեանցից
նեղանալու:

Տ-ի գաղանակին դէմքի վրայ փայլեց
դիւական ժաղանք. նա առանց գլուխը բար-
ձրացնելու ասաց:

—Ես չեմ կարող ձեզ հետ ընկերութիւն
անել, քանի որ ճանաչեցի ձեզ, վաղն էլ կա-
րող էք մի ուրիշի խորհրդով ինձ հետ այն-
պէս վարուիլ ինչպէս վարուեցիք բարերարիդ
հետ: Իսկ ինչ վերաբերում է հաշիւներիդ՝
շատ լաւ, ինչ գողացել էք պիտի կիսենք,
եթէ ոչ, ես իմ անելիքը գիտեմ:

Հարուածը խիստ էր. Ա. զգաց իւր սխալը:
Թէև նա կարող էր Տ-ից դատաստանով պա-
հանջել իրեն հասանելի գումարը, թէև նա
ունէր իւր հաւատարիմ ծառայութեան համար
վկայական, սակայն կարող էր Տ-ը նրան բարո-
յապէս և նիւթապէս վնասել նրա արած վեր-
ջին անհաւատարմութեան համար. ուստի Ա.
ասաց. «Ուրեմն գուք ինձ թշնամաբար էք այն
խորհուրդները տուել»:

—Ո՛չ, ես նախ իմ օգտիս եմ տուել, երկ-
րորդ ձեր, պատասխանեց Տ-ը:

—Չեմ հասկանում:

—Լսեցէք, կալարզեմ միտքս, շարունակեց
Տ-ը. «Մենք իրեւ մի երկրացի պիտի միմեանց
համար ցաւէինք. եթէ ես չլինէի, գեռ ոռ-
ջիկդ էլ սաացած չպիտի լինէիք և այսօր կը-
լինէիք ալնպէս, ինչպէս սորանից քանի տարի
առաջ. ուրեմն կնշանակէ որ ոռճիկդ և այն
շնորհակալութեան թերթն ես եմ տուած:
Դուք իրաւունք չունիք ինձանից նեղանալու.
Եթէ ես այսքանն արել եմ քո օգտի համար,
մասամբ էլ քո բարոյականը փորձելու մտքով.
Հիմայ ինչ պիտի անես: Միթէ ես քեզ պար-
տական էի. ես իմ օգտի համար էլ եմ մտածել

և այդ ալժմ իմ ձեռքումն է։ Եթէ կուզէք
առանց ինձ մասն հանելու խլել, չէք կարող,
բոլորիցն էլ կզրկուիք և խայտառակ կմնաք։

— Ուրեմն ինչ էք ուզում անելու, հարցըց
Ա.-ը մեղմաբար։

— Ուրիշ ոչինչ, ինչ որ ինձ մօտ է՝ ինձ,
ինչ որ վերցըել էք՝ ձեզ, պատասխանեց Վ.-ը։

— Այդ կատարեալ անխղճութիւն և անազ-
նուութիւն է, ինչ որ ձեզ մօտ է, այդ իմ
հալալ ոռճիկս է. իսկ ինչ վերցըել եմ, կարող
եմ ազնուութեամբ կիսել, համաձայն էք։

— Ո՛չ, պատասխանեց Վ.-ը։

— Ահա երկու տարի է քանի հազար ըուբլիս
էլ ձեզ մօտ է, դրա տոկոսիքն էլ ձեզ լինի.
եղբայր, 'ի սէր Աստուծոյ ազատեցէք ինձ, ես
կուուի հետ բան չունիմ։

— Լաւ, ընդունեցի, թող այգակէս լինի,
վաղը չէ միւս օրը երեկոյեան ձեռագիրս բե-
րէք և փողներդ ստացէք, պատասխանեց Վ.-ը։



Սուսնութեան։



Երկինքը տխուր էր. լիոները, բլուրները,
անտառներն աներևութացած էին թանձրախիտ
մշուշից, որն իւր խոնաւութեամբ նստած էր
Ն քաղաքի վրայ։ Երբեմն-երբեմն այս և այն
կողմից ճրագների լոյսը շատ աղօտ կերպով
նշանակութիւն էր լինում տների պատուհաններից։
Ըսթերցողին յալտնի Ա.-ը շատ տխուր էր և
կարծես մի բնազգումով. երկիւղ էր անում և
չէր ուզում գնալ Յ-ի մօտ. բայց պարտա-
մուրհակն իւր հագստի մի գաղտնի տեղում
ծածկելով գնաց։ Յ.-ը թէւ նստած իւր փոքրիկ
գրասեղանի առաջ մի ինչ որ հաշիւ էր քա-
շում, սակայն նրա դէմքից պարզ կարելի էր
իմանալ որ նա վրդովուած է և մի ինչ որ



դժոխային միտք ալեկոծում է նրան։ Կարճ լոռութիւնից յետոյ նա դարձաւ Ա.-ին ասելով՝ բերթք մուըհակս։

—Այս, պատասխանեց Ա.-ը։

—Տուեք տեսնեմ։

—Տեսնելու ի՞նչ կարիք կայ, տուեք փողերը և ստացեք։

—Ուրեմն չէք հաւատում ինձ, հարցրեց Ա.-ը։

—Եթէ չհաւատայի իմ ռոճիկը ձեզ չէի տալ։

—Որ տուել էք ի՞նչ վնաս էք ստացել։

—Հարցիդ պատասխանը մեզ շատ հեռու կտանէ, աւելի լաւն է դուք փողը տաք, ես էլ թուղթը։

—Շատ լաւ, պատասխանեց Ա.-ը և փողերը դրաւ գրասեղանի վրայ։

Ա.-ը փողերը համրեց, վերառաւ և պարտամուըհակը տալով Ա.-ին ցանկանում էր հեռանալ, բայց Ա.-ը բռնելով նրան ասաց, «Դուք նեղացած էք ինձանից մինչև չհաշտուենք, չեմ բաց թողնիլ ձեզ, մենք բարեկամներ ենք եղած և պիտի լինենք. մի կոտր հաց կուտենք այնուհետև կարող էք գնալ։

՚Ի զուր էր Ա.-ի պնդիլը. Ա.-ը աւելի

ալինդը բռնելով չժողեց։ Երկուսն էլ նստած էին սեղանի շուրջը։ Ա. տիտուր էր, իսկ Ա.-ը աւելի մտատանջութեան մէջ էր քան տիտուր. կարծես մի ինչ որ նախահոգ եղեռն ալեկոծում էր նրա ներքինը, թէև նա աշխատում էր որքան կարելին է իրեն լաւ պահել։

—Դուք տիտուր էք և նեղացած ինձանից, ասաց Ա.-ը Ա.-ին և իրաւունք ունիք քանի որ աչքի առաջ չէք բերում այն բարեկամական զգուշացուցիչ խորհուրդները, որը տուել եմ ձեզ և որով այսօր թէ դուք և թէ ես կանդնած ենք հաստատ հողի վրայ։ Ի՞նչ կլինէր մեր ապագան եթէ ես այդ խորհուրդներն օր առաջ ձեզ պուած չլինէի և դուք անկատար թողած լինէիք։ Հաւատացէք, բարեկամ, երկուսն էլ ոչինչ, երկուսն էլ մեռած։ Միթէ չէք իմադանում օր առանց այդ անիծեալ փողի հանձարներն անդամ ոչինչ են. ուր մնաց մեզ նմանները։ Միթէ չգիտէք որ գիտութիւն, իմաստութիւն և բոլոր սրանց նմաններն առանց նիւթականի նման են միաձեռանի մարդու և եթէ այդ անիծեալ ոսկին, արծաթը մի անպէտք բան լինէին, երկիրն իւր սրտի մէջ գտնելով չէր ծածկել և մարդիկ այնքան նեղու-

թիւններ չէին քաշել ալդ գանձերը սեպհականացնելու: Աւրեմն խմենք միմեանց կենաց, որովհետև երկուս էլ օգնել ենք միմեանց:

Ա-ը չէր բանվում, մի բան տանջում էր նրան և զրա պատճառը Վ-ին էր համարում: Նա վեր առաւ բաժակը և տոսաց. «Պարոն Վ! մենք՝ ինչպէս դուք էք կարծում, հաստատ հողի վրայ չենք կանգնած, այժմ շնորհիւ ձեր գոնէ ինձ համար երկիրը՝ որտեղ էլ լինիմ, կարծես մի փխրուն նկվթ է դարձած և ես երկիւղ եմ անում ոտքս դնելու կարծելով՝ որ նա պիտի անշուշտ պատառուի և ինձ անգունդը խորասուզի: Ես արդէն ինձ բարոյապէս մեռած եմ համարում և իմ մահուան պատճառը դուք էք: Ես մեղանչեցի այն մարդու դէմ, որն ինձ այսքան երկար տարիներ ինամել, պահել է հայրաբար, որն իմ հաւատարիմ գործառնութեանս համար վարձատրել է առատապէս: Բայց ես փոխանակ նրան այս վերջին նեղութեան մէջ թւ ու թիւկունք լինելու, նրան իմ կարացածին չափ օգնելու, ձեր խորամանդ գայթակղեցուցիչ խորհուրդներին նայելով դաւաճանեցի: Դաւաճանեցի ալո՛ լիմարաբար և ալդ արի, կամ աւելի լաւն

է ասել, անել տուիք ինձ ձեզ պէս մի անազ-նիւ մարդու օգտին: Ես թքելով թքում եմ այն մեծութիւնների, փառքի, ոսկու և ար-ծաթի վրայ, որոնք չեն հաւասարվում այն անգնահատելի հոգեկան խաղաղութեան, որը տալիս է անմեղութիւնը: Ի՞նչ օգուտ ինձ օտարների անտեղի յարգանքն ու երանութիւնը, քանի որ իմ ներքինն ինձ անարգելով դատապարտում է: Լաւ է թշուառ լինել բաղ-դից, քան թագաւորական աթոռի վրայ տան-ջուիլ խղճից: Ես կարձում եմ իմ խօսքերիս հետ և ձեր ինձ հետ ունեցած անուանարդ ու նենգաւոր բարեկամութիւնը. խմում եմ միայն այն անձանց կենացները, որոնք փրկում են մարդկանց բարոյական անկումից: Թողում և մոռանում եմ ձեզ ընդ միշտ, և եթէ լիշելու էլ լինեմ, այն էլ միայն զզուանքով և զգու-շանալու մտքով»:

Ս.ի խօսքելը վերջացնելով խմեց բաժակը, բաժակ՝ որն արդարև յաւիտեան պիտի թողել տար նրան այս աշխարհը: Քանի օրից յետոյ Ա-ի գիտակը գտան մի անտառի մէջ և ոչ չիմացաւ նրա մահուան պատճառը:

Մի քանի ամսից յետոյ Վ-ը մի գլորիկ

արիւնոտ գումարով դարձաւ իւր հայրենիք և
վաճառականութիւն սկսեց: Այդտեղ էին և
Տ-ի նախկին բարերարները, որոնք յայտնի
վաճառականներ էին: Ե-ը քաշվում էր նրան-
ցից, երկիւղ կը լով որ նրանք հարազատ
գոյներով կնախագրեն իրեն միւս վաճառա-
կանների մօտ: Նա իւր նենդաւոր բնաւորու-
թեան համաձայն սկսեց բարեկամանալ Հ
քաղաքում մի քանի հատ Ռուսաստանից և
արտասահմանից մեծ քանակութեամբ ապրանք
արտահանող վաճառականների հետ, փողձել
նրանց թոյլ կողմերը, չափել, կշռել նրանց
ամեն քայլը, խօսքը և հարկաւոր ժամանակ՝
իւր բնածին ատելի բնաւորութեան համաձայն
քծնել, շոյել, շողքորթել: Նա իւր նախկին
բարերարների վեշը բաց չէր թողում, միշտ
նրանց հետ գործ ունէր և թէալէտ երեմն-
երեմն իւր արած անցեալ անհաւատարմու-
թեան համար ներողութիւն էր խնդրում, սա-
կայն յարմար ժամանակի էր սպասում նրան-
ցից վիշտը հանելու:

Մի քանի տարուայ ընթացքում Տ-ը բա-
րական ծանօթացաւ թէ Հ քաղաքի զլիւաւոր
և թէ գիւղացի մանր վաճառականների հետ:

Եւ որուէս զի կարողանալ բոլորովին պարզածիտ
գիւղացիներին դէպի ինքը գրաւել, դիմեց այս
սատանալական միջոցին: Նա մի օր այս, մի օր
էլ այն գիւղի նշանաւոր անձին այսպէս էր
ասում. «Լաւ չեմ լիշում որ օր էր, միայն կար-
ծեմ ձեր գիւղից մի քանի մարդիկ ինձանից
ճօթ կտոր առնելուց լետոյ, խանութիս մէջ
կապած մի քանի բուբելի են ձգել, խնդրեմ՝ ի
սէր Սատուծոյ յայտնէք գիւղացուց թէ իրենցն
է գան տանեն»: 'Ի հարկէ ոչ ոք չէր համար-
ձակում գալ ուզել, քանի որ իրենը չէր. և
եկողներից էլ հարցնում էր. «Քանի մանէթ էք
ձգել, ինչի մէջ էր կապած, թուղթ էր, ո՞և
թէ սպիտակ»: Պարզ է որ ոչ ոք չէր կարող
ասել, քանի որ չէր կորցրել: Քանի շաբաթ
անցնելուց լետոյ, մի քանի բուբելի էր տալիս
այս կամ այն գիւղի իւր մի ծանօթ, փոքը՝ ի
շատէ ազգեցիկ անձնաւորութեան թէ՝ ես չեմ
ուզում իմ հալալ աշխատանքը հարամացնել,
տարէք ձեր գիւղի աղքատներին բաժանեցէք:

Այս մի նենդաւոր միջոց էր գիւղացինե-
րին հեշտ գրաւելու համար: Արդարեւ կարճ
միջոցից լետոյ շատ գիւղացիներ ուղղակի գի-
մում էին Տ-ի խանութը. իսկ մանրավաճառ-

ներից շատերն էլ նեղութիւն չեին քաշում քաղաք գալու, բաւական էր մի նամակ մեր Վ.-ի հասցէին. նա նրանց բոլոր ուզածները թէ իրանից և թէ ուրիշներից կպատրաստէր և իսկայն կճանապարհէր: «Մի քանի տարի էլ, այնուհետև ես գիտեմ ինչ պիտի անեմ», ասում էր մեր Վ.-ը ինքն իրեն: Իսկ որ մի քանի տարուայ մէջ նա կարողացաւ իւր նիւթականը շահացնել: Թէ և վաճառականները արդէն ծանօթացել էին նրա կեղտոտ, քսու և նենգաւոր հոգու հետ, սակայն իրենց ապրանքը ծախելու համար (որովհետև Վ.-ը մեծ ապրանք էր հալացնում) ակամայից առ երես յարգում էին: Միայն նրա նսխկին բարերաները շատ էլ ուշ չեին դարձնում նրան: Վ.-ը նրանց վարկը հասարակութեան և Ռուսաստանի մէջ ձգելու համար, զանազան անախորժ լուրեր էր տարածել և մինչև անգամ խարդախ միջոցներով ցանկացել էր իմանալ թէ նրանք որքան պարտիք ու պահանջք ունին. բայց այդ իրեն երեսի սպիտակ տեղն էլ սեացրաւ:

Վ.-ը վաճառականական ասպարիզի մէջ անազնուութեան մի քանի քայլ անելուց

իւտոյ, առանց իւր մտաւոր ոյժը ու պաշարը կշռելու, ուզեց և ազգալին գործերի մէջ խառնուիլ: Օրինակ՝ ուզեց երեցփոխ, հոգաբարձու, բարեգործական ընկերութեան գանձապահ կամ նախագահ, կեղծ պատգամաւոր, քաղաքագլուխ և, եթէ հնար լինէր, քաղաքական ինքնավարութեան զեկավար գտունալ: Հէնց դորա համար էլ սկսեց փոխանակ ուզելը ու գլուխը փոխելու, հագուստը փոխել. նշանաւոր և ազգեցիկ մարդիկ հրապարակում կանգնած խօսալու ժամանակ մօտենալ նրանց, քծնել նրանց շուրջը, մի քանի փողոցալին դադարկագլուխների շրջանը մտնել շուտ-շուտ հիւրասիրել նրանց: Մի խօսքով խեղջ Վ.-ը որքան էլ աշխատեց իւր Դօնկիշոտական խըմբով, բայց այս վերջին բաղձանքներին չկարողացաւ հասնել, որովհետև ինքնաճանաչ հասարակութիւնը իւր խոհեմ գործառնութեամբ կարծես նրա համար այս դատավճիռը դրաւ. «Թէ՝ մեր ազգալին հասարակական գործերի համար մարդ է հարկաւոր և ոչ թէ մի քանի նորեկ, հացախնդիր, հալրենասիրական գիմակի տակ թագնուած, հալրենիքի սրբութիւններն ոտնակոխ անող և նրա եկեղեցու

երկաթեալ սիւները մկան պէս կրծող, տար-
րապաշտ, անհարազատ զաւակների երեմն
հադուստների երկար ստորատը և երեմն
նրանց մոփսակերպ շնիկը»:



Նամակաց ա ոչ եւուրաց որ զու
նաւա ուն յանձնար մասն յանձնար ուն
զու յու ներ յանձնար ուն յանձնար ուն
ուն յու ա ոչ է նախան զու գիւղար ուն

Ե-ի ՀՀՀ- Տ և և Տ ու հ.



Երկար տարիները կնճիռներ էին թողել
Դ-ի տափակ երեսին. ամեն բան փչացնող ծե-
րութիւնը հասել էր և նրան: Նա ալլ ևս չեր
կարողանում առաջուայ պէս իւր վնասակար
ել ու մուտքն անել. Նա կտրուած էր արտա-
քին աշխարհից և հիւանդ: Նրա ներքին խա-
ղաղութիւնը բոլորովին կորած էր. միշտ ինքն
իրեն հետ խօսում, բարկանում, հայհոյում էր
և երեմն-երեմն մի ինչ որ բանից վախեցող
երկոտ երեխայի պէս թագնվում, մանաւանդ
գիշերները շատ անգամ չեր քնում և բոլորն էլ
երկիւղ էին անում նրա մօտ մտնելու: Ե-ի կինը
և որդիքը կարծում էին թէ նա ցնորսւել է.

բայց երբ որ խօսացնում էին և հարցնում նրա մելամաղձութեան պատճառը՝ նա ասում էր. «Մի վախենաք, ես խելացնոր չեմ, այլ կայ մի գաղտնիք, որը տանջում է ինձ և որի մասին առ այժմ չեմ կարող պատմել ձեզ»:

Նրա մեծ որդին, որ ատելով ատում էր հօրը նրա վատ բնաւորութեան համար և ինքն էլ ատուած էր նրանից, մի բանիմաց և հետաքրքիր տղայ էր, յանկացաւ մի կերպ հօր տանջանքի պատճառն իմանալ: Մի անգամ երբ որ բոլորը քնեցին, ինքը գաղտնի մտաւ հօր սենեակին կից փոքրիկ սենեակը և սկսեց ականջ դնել հօր խօսքերին: Նա սկզբում բացի անորոշ շնչնչ չէր լսում, ուստի մօտեցաւ այդ երկու սենեակի մէջ տեղ եղած նախօրօք փակած կիսապակեալ դրան, բարձրացրեց նրա ծածկոլթի ծալը և սկսեց դիդել ու լսել հօր շարժուած քները ու խօսքերը:

Եղ գրէթէ անշարժ, ահ ու դսղով, ճնշուած, քստմնած մազերով կանգնած էր սենեակի մէջ և յանկարծ աչքը դրան ձգելով գոչեց. «Ո՞հ կգայ ողորմելի թշուառական և ոճրագործ մարդ»: կասէր ինքն իրեն. «անկարծիք այս խօսքերը պիտի ասեն ինձ, երկրիս

վրայ այլ ևս քեզ համար ցաւակից չես կարող ունենալ, երկնքումն էլ գթութիւն չես կարող գտնել.... Ա՛խ, ով չար բաղդ, երկիւղ և զարհուրանք կորեք, հեռացէք ինձանից: Ես կարծում էի որ նրան թունաւորելով սպանեցի, բայց ահա նա, նա ոչ ճիւտղ է ոչ սատանայ: Զէ, նա դեռ կենդանի է, երևի մեռելները վեր են կենում. ախ, գթա, ներիք կաղաշեմ, կզղչամ, խնալիր ինձ կամ հեռացիք, զարհուրելի է ինձ քո ստուերը, ահ, պատռում է սիրտս, ես յանցաւոր եմ, ես ոճրագործ եմ»: Այս խօսքերն ասելով գոռաց և ընկաւ գետնի վրայ:

Որդին տեսնելով հօր ուշաթափուելը խոկոյն մտաւ ներս, գրորեց նրա մարմինը և մի կերպ ուշի բերաւ առանց ոչ ոքի քունը խանդաբարելու: Հօրը պառկացրեց մահճակալի վրայ և ինքը մօտ նստելով, սկսեց սառը ջրով թրջել նրա ճակատը և խրախուսել նրան: Եղ մասամբ հանգիստ էր. բայց երբեմն-երբեմն իւր նուազած աչքերը ձգելով որդուն հարցնում էր. «Քիշերուայ այս ժամանակ ի՞նչ ես անում ալստեղ որդի, երբ եկիր ինձ մօտ, մի գուցէ....

Հայր, այժմ ես գիտեմ քեզ տանջող հիւանդութեան պատճառը, ես լսեցի քո խօսքերը, այլ ես թագյնելու կարիք չկայ. մի լուսահատիր, ով դժբաղդ հայր, Աստուծոյ ողորմութիւնը անչափ է, նայի՛ր դէպի կապուտակ աստղազարդ երկնակամարը, դէպի Բարձրելոյն աթոռը, մօտեցի՛ր զղացեալ, դէպի Գթածը և թնդ որ նա իւր հզօր ձեռքը տարածէ վրադ, այնուհետեւ կազատէ քեզ, կտանէ քեզ երանելեաց աշխարհը: Արդարեւ ինչափս ինչպէս լսել, տեսել և տեսնում եմ քո անցաւոր կեանքդ շատ վատ ես անցկացրել, դորա համար էլ մենք փոխադարձարար տտել ենք միմեանց. բայց այժմ ցաւում եմ վրադ: Քո անթիւ յանցանքների ձայնն երկինք կբողոքէ. բայց որ ճշմարտութեամբ զղալու լինիս երկնաւոր Որդու սուրբ արիւնը քեզ թողութիւն կտայ և բոլոր ոճիրներդ կընջէ: Աչքդ դէպի Աստուած բարձրացրու, ծանրացած խիզճդ խոստովանութեամբ թնդ թեթևանալ, այնուհետեւ քաջութիւն կունենաս դժբաղտութիւնդ հեռացնելու:

Ե-ի աչքերը լճացին արտասուքով, որդու ազգու խօսքերը խոր թափանցեցին հօր սրտի

մէջ, այդ նենգաւոր մարդու սիրտն աշխարհի մեղքերի բանտից դէպի երկինք բարձրացաւ, և նրա երկար ժամանակից 'ի վեր շատ դառն կապանքներով կաշկադուած ոգին բարձրագոյն խորհրդների մօտեցաւ ու սկսեց Աստուծոյ ողորմութեան վրալ յոյս գնել: Նա արտասուքով և զղացեալ սրտով պատմեց իւր որդուն իւր տեսիլքը, անցեալ ոճրագործութիւնները, բարոյապէս մարդասպանութիւնները, զրպարտութիւնները, մի խօսքով իւր բոլոր մեղքերը, այս բոլորի պատճառ ընթերցողին յատնի հրէշին նզովք կարդալով: 'Ի վերջոյ օրհնեց որդուն, ներողութիւն խնդրեց նրան 'ի զուր տտելուն համար և մի քահանալ պահանջեց:

Արշալուսի առաջին ճառագալթնը դեռ նոր էին թափանցել Ա-ի սենեակը երբ պատկառելի քահանաներից մէկը մտաւ զղացելու սենըակը: Ա-ի դէմքի գտոնութիւնն ու գամանութիւնը թէեւ անհետացել էին, թէեւ նրա մի ժամանակ խորվութեամբ ալեկոծուող սրտում խաղաղութիւն և հանգիստ կ'ակրէր, սակայն նա մօտացել էր մահուան և այլ և ս երկար ապրելու յոյս չկար: Նա քահանալին տեսնելուն պէս մի կերպ ծունկ չոքեց, արտասուքն

աչքերից, մահուան ցուրտ քրտինքը գէմքից
կաթ-կաթ գլորվում էին այտերի վրայ: Նա
ամեն բան խոստովանուեց քահանալին և սո-
րանից աւետարանական սրբազան վարդապե-
տութեան խօսքերով միմիթարուած, հաւատով,
յուսով և սիրով վառուած հաղորդուեց ու
թողեց աշխարհը:

Նրա անշուք տապանաքարի վրայ իւր
ցանկութեան համաձայն որդիքը զըել տուին
այս խորհրդաւոր խօսքերը. «Մեռայ ծերու-
թեանս մէջ, սակայն ուե կեանքումս միայն մի
ժամ ապրեցի»:



3991

00008375

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0008375

